ԿՐՕՆԱԼԳԻՏԱԿԱՆ

Ա. Գ. ՔԱԼԱՇՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵԿԵՂԵՑԱԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ

Ի դարի վերջին տասնամյակը հայ ժողովրդի եւ Հայ Առաքելական Եկեղեցու պատմության շրջադարձային ժամանակաշրջաններից է: Թեեւ ժամանակագրական առումով այն ընդամենը մի ակնթարթ է մեր բազմադարյա պատմության մեջ, սակայն չափազանց տարողունակ ու բազմաշերտ է իր բովանդակությամբ եւ ուղղվածությամբ: Դա հայոց ազգային պետականության վերակերտումի, անցյալի արժեքների վերագնահատման, տասնամյակներով բեկված հավատավոր հայ հոգու ապաքինման եւ վերածնության ժամանակաշրջանն է: Հայոց պատմության այս փուլը բազմապիսի եւ բազմապլան խնդիրներ է առաջադրել նաեւ մեր ազգային ավանդական հաստատությանը՝ Հայ Առաքելական Եկեղեցուն, որը 1700 տարիներից ի վեր ոչ միայն հանդես է եկել որպես քրիստոնեական մեր էության եւ համազգային միասնության անխոնջ ջատագով, այլեւ իր ազգանվեր հայացքը սեւեռել է գալիք ապագային:

Ահա այս պայմաններում Հայ Եկեղեցու առաքելահաստատ եւ լուսավորչահիմն գահին բարձրացավ Ամենայն Հայոց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը, ում բազմաբեղուն գործունեությունը Հայ Եկեղեցուն եւ հայրենիքին անմնացորդ նվիրվելու փայլուն եւ ուսանելի օրինակ է:

Աչքի առջեւ ունենալով ապագայի հզոր եւ միասնական Հայ Եկեղեցու տեսլականը՝ կազմակերպչական անխոնջ ջանադրությամբ Վեհափառ Հայրապետն իր անսպառ կարողություններով հեռատեսորեն ձեռնամուխ եղավ մարդկային հոգին արգասավորող հոգեւոր վերակերտումի, ապագայի հանդեպ անսասան հավատ եւ ներշնչում ծնող ու արմատավորող «միասնական ու ծաղկուն Եկեղեցու Խորանի լույսն առատացնելու», եկեղեցաշեն, գիտակրթական, կազմակերպչական, մանկավարժական եւ բազմապիսի այլ աշխատանքների կազմակերպմանը: Գարեգին Բ Վեհափառի բազմաբեղուն եւ մեծաջան պրպտումների ելակետը 2000 թ. փետրվարի 5-ի Հայրապետական Կոնդակն է, մի փաստաթուղթ, որով Հայոց Հայրապետը համայն հայ ժողովրդին է ներկայանում հոգեւոր լայն գործունեություն ծավալելու ծրագրով:

Հիրավի, Հայրապետական Կոնդակը, որտեղ թվարկվում է Եկեղեցու առջև կանգնած հրատապ խնդիրների իրագործման հաջորդականությունը, անթեղում է հավատքի արմատավորման եւ ծավալման գործի իրատեսական քայլեր: Նրանում մեծապես կարեւորվում են ազգային պետականության եւ Մայր Եկեղեցու, ինչպես նաեւ Մայր Հայրենիքի եւ աշխարհասփյուռ հայ ժողովրդի հոգու եւ սրտի կամրջումը: Շեշտադրվում է նաեւ արդի աշխարհի հոգեւոր կյանքի ելեւէջներին ծանոթ, համակողմանի զարգացած, հոգեւոր եւ քաղաքակրթական բազմաչափ տարածության եւ բազմաշերտ հարաբերություններին քաջատեղյակ, Հայաստանի եւ արտաշխարհի ճանաչված ասպվածաբանական համալսարաններում եւ գիտակրթական կենտրոններում գիտելիքները խորացրած Հայ Եկեղեցու սպասավորների պատրաստման, աճող սերնդի հոգեւոր-բարոյական դաստիարակության, ազգային մշակույթի զարգացման խթանումը, միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերությունների ծավալումը եւ այլն:

Գրեթե մեկ տասնամյակ է անցել Հայ Եկեղեցու Նվիրապետի հրապարակած Կոնդակից: Մեկ տասնամյակ, որն ընդամենը մեկ ակնթարթ է հազարամյակների պատմություն ունեցող Հայ Եկեղեցու եւ ժողովրդի կյանքում: Սակայն այդ տասնամյակը դարձել է Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի ծրագրերի իրականացման տասնամյակ, ինչը փաստում է նրա գործունեության ոլորտում խոսքի եւ գործի ներդաշնակությունը:

Եվ պետք է նկատել, որ բազմաբեղուն այդ գործունեության մեկնակետը Վեհափառ Հայրապետի եկեղեցաբանական-ասպվածաբանական ըմբռնումներն են:

Ինչպես փաստական նյութն է վկայում, արդի ասպվածաբանության առանցքային բնագավառներից մեկի՝ եկեղեցաբանության հավատքային հիմնարար սկզբունքների ընդհանրացնող մեկնությանն անդրադառնալը Վեհափառ Հայրապետի կողմից իմաստավորվում է հոգեւոր, տեսական, հասարակական-քաղաքական, ազգային ինքնության ու ինքնագիտակցության եւ այլ տեսանկյուններից:

Քաջածանոթ լինելով այն իրողությանը, որ վերջին երեք դարերի հասարակական-քաղաքական եւ քաղաքակրթական արմատական տեղաշարժերն իրենց անուրանալի կնիքն են դրել նաեւ հոգեւոր կյանքում՝ Վեհափառի պրպտող միտքն իր մեկնություններով առաջին հերթին փաստում է, որ արտաքին միջամտություններից անկախ իր ծառայության սահմաններում Եկեղեցին գործառնել եւ գործառնում է ավանդական խորհրդապաշտության ոլորտում: Անշուշտ, դա ամենեւին էլ չի նշանակում, թե եկեղեցաբանական այդ մոտեցումն անտեսում կամ մոռացության է մատնում արտաքին ազդեցությունները: Դրանք եղել են Եկեղեցու պատմության անփոփոխ ուղեկիցները: Սակայն, ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում, Եկեղեցու կողմից այդ ազդեցություններն ու մարտահրավերներն ընկալվել, վերամշակվել եւ վերարտադրվել են քրիստոնեական արժեհամակարգի պրիզմայով եւ այդ որակով էլ որպես արժեք մատուցվել են հավատացյալ զանգվածներին: Միաժամանակ քաջ գիտակցելով, որ XX դարում «եկեղեցի» երեւույթը լայն քննարկման առարկա է դարձել նաեւ հումանիտար գիտությունների համար՝ Գարեգին Բ Վեհա-

փառը եկեղեցաբանական հիմնահարցերի վերլուծությանն ու մեկնությանն անդրադառնում է նաեւ տեսական մակարդակով: Պատճառն այն է, որ այդ հարցում հումանիտար գիտություններն ունեն տրամաբանական մեկ ընդհանուր ուղղվածություն, այն է՝ Եկեղեցու հետ կապված հիմնահարցերը քննարկել իրենց համար առաջնահերթություն համարվող կոնկրետ նպատակներով, իսկ հավատի եւ կրոնական պատկերացումների համակարգից ընտրել եւ արժեւորել միայն այն, ինչն առավելագույնս համապատասխանում է իրենց խնդիրներին: Եւ փիլիսոփայության դոկտոր Գարեգին Բ Վեհափառի[1] վերլուծական միտքը, տեսականորեն ընդհանրացնելով ու համադրելով արժեքային այդ մոտեցումները, քրիստոնեական ավանդության համակողմանի մեկնաբանության հիման վրա առաջադրում է եկեղեցաբանական մի հայեցակարգ, որը ներկայացվում է իր գոյաբանական եւ գործառնական ամբողջության՝ «ծառայական կերպի» մեջ:

Վեհափառ Հայրապետը եկեղեցաբանական հիմնահարցերի վերլուծությունն ու համակողմանի արժեւորումը պայմանավորում է նաեւ արդի մարտահրավերներով: Փաստելով, որ «աշխարհն արագորեն փոխվում է, փոխվում են նաեւ Եկեղեցու մարտահրավերները»[2]՝ նա հանգում է աշխարհայացքային եւ արժեքաբանական ընդհանրացնող այն հետեւությանը, որ Եկեղեցու առջեւ կանգնած նոր մարտահրավերները եկեղեցաբանական նոր մոտեցումներ են պահանջում: Ընդ որում, այդ գործընթացում աստվածաբանն անթույլատրելի եւ հիմնովին մերժելի է համարում ապակառուցողական ցանկացած մոդել՝ հստակ ուղենիշ ունենալով այն, որ հասարակական-քաղաքական, քաղաքակրթական ու հոգեւոր նոր պայմաններով կյանքի կոչված մարտահրավերների պատասխանը հրամայաբար պահանջում է հայացքն ուղղել դեպի եկեղեցական ավանդություն: Իսկ դա նշանակում է, որ Վեհափառի առաջադրած եկեղեցաբանական հայեցակարգում հանրային կյանքում տեղ գտած հոգեւոր-քաղաքակրթական արդի մարտահրավերների էությունը բացահայտող նոր մոտեցումները խարսխվում են եկեղեցական պրակտիկայի ավանդական ըմբռնումներից բխող եւ հոգեւոր փորձի վրա հենված փաստարկների վրա: Ջատագովության տարբեր ձեւերով հանդես եկող աստվածաբանական այդ մոտեցումն իր հիմքում ունի նաեւ Հայ Եկեղեցու աշխարհայացքային այն սրբագործված չափորոշիչները, որոնք մերժում են ուղղադավանությանը հակադրվող հավատքային եւ քաղաքակրթական ցանկացած հարկադրանք:

Գարեգին Բ Վեհափառը եկեղեցաբանական հիմնահարցերի քննությանն անդրադառնում է ինչպես տեսական, այնպես էլ պատմական եւ գործնական աստվածաբանության դիրքերից: Քաջածանոթ լինելով եկեղեցական պատմությանը՝ նա առաջին հերթին համակողմանի արժեւորման է ենթարկում այդ հարցում Արեւմտ-

1 Միջազգային տեղեկատվության ակադեմիայի եւ ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդի կողմից 2000 թ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Վեհափառն առաջադրվել է այդ ակադեմիայի անդամ, իսկ 2001 թ. ակադեմիայի տնօրինության կողմից նրան շնորհվել է փիլիսոփայության դոկտորի աստիճան, տե՛ս «*Հայ Եկեղեցու հանրագիտարան», պրակ Ա, «Ամենայն Հայոց Կաթողիկոսներ», Ս. Էջմիածին, 2008, էջ 35:*

2 **«Էջմիածին»**, 2008, Ե, էջ 12:

յան աստվածաբանական մոտեցումները: Ազգային եկեղեցական ավանդության դիրքերից նա ցույց է տալիս, որ Եկեղեցու մասին վարդապետությունն աստվածաբանական տեսական զարգացման արդյունք է, որը ձեւավորվել է հավատքային տարբեր կողմնորոշում ունեցող համակարգերում եւ իր վրա կրում է դրանց կնիքը: Այդ համատեքստում վերլուծաբանը նախ անդրադառնում է Եկեղեցու ավանդական ըմբռնմանը: Փաստական նյութի ընդհանրացված վերլուծության հիման վրա Վեհափառը ցույց է տալիս, որ Եկեղեցու էությունը բնորոշող գծերն առկա են Աստվածաշնչում, եւ որ դրանց աստվածաբանական ընդհանրացումն էլ հանդիսանում է այն պատկերացումը, որով Եկեղեցին ըմբռնվում եւ մեկնաբանվում է որպես աշխարհի փոփոխությանը միտված հոգեւոր կառույց: Աստվածաբանական այդ մոտեցումն ամբողջանում է այն պատկերացման տեսքով, որ եկեղեցին աստվածային շնորհի կրողն է ու պահապանը եւ որ աշխարհն աստվածային այդ շնորհին կարող է հաղորդակից դառնալ եւ բարեփոխվել միմիայն եկեղեցու հետ ունեցած կապի մեջ եկեղեցական խորհուրդներն անվերապահորեն կատարելու միջոցով:

Այդ հարցում Վեհափառի աստվածաբանական համոզմունքն է, որ հավատի ցանկացած ըմբռնում պետք է հենվի ոչ թե այս կամ այն անհատի (կրոնական խմբի կամ բարենորոգչի) սուբյեկտիվ կողմնորոշման, այլ հավատքային ընդհանրության (Եկեղեցու) կրոնական փորձի վրա: Եվ համոզված լինելով, որ աստվածաբանական այդ մոտեցումը թույլ է տալիս օբյեկտիվորեն ներկայացնել ներեկեղեցական եւ միջեկեղեցական կյանքի իրական հարաբերությունները՝ վերլուծաբանն այդ դիրքերից էլ արժեւորման է ենթարկում հրապարակում գտնվող եկեղեցաբանական մոդելները:

1970-ական թվականներին Վիեննայի եւ Բոննի համալսարանների աստվածաբանության ֆակուլտետներում եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու բարձրագույն՝ Զագորսկի Հոգեւոր Ակադեմիայի ասպիրանտուրայում ուսանելու շրջանում աստվածաբանական, տեսական եւ գործնական առումներով խորամուխ լինելով եկեղեցաբանական հարցերի մեջ՝ Վեհափառը նկատում է, որ Ի դարի երկրորդ կեսում եկեղեցաբանական հիմնահարցերն աստիճանաբար վերածվել են աստվածաբանական մտքի կիզակետի: Նա քաջ գիտակցում է նաեւ, որ այդ ոլորտում առաջադրված աստվածաբանական լուծումները թեեւ արտացոլում են հավատքային միեւնույն երեւույթները, այդուհանդերձ, այդ երեւույթների ընկալման եւ մեկնության տարբերությամբ պայմանավորված՝ բազմաթիվ հարցերում տարանջատվում եւ հակադրվում են միմյանց: Ընդ որում, մեթոդաբանական մոտեցումների հետ կապված այդ տարբերությունները հավասարապես դրսեւորվել են ինչպես Եկեղեցու էության հիմնահարցի, այնպես էլ Եկեղեցու կոնկրետ (դինամիկ) ըմբռնման ոլորտներում: Նրա քննախույզ հայացքից չի վրիպել եւ այն, որ Արեւմուտքում հրապարակ իջած եկեղեցաբանական հայեցակարգերից շատերն աչքի են ընկնում պրակտիկ կողմնորոշմամբ, այսինքն՝ Եկեղեցու էության եւ առաքելության հիմնահարցերը քննարկում եւ արժեւորում են հասարակական փոփոխությունների, ինչպես նաեւ աշխարհականացման միտումների համատեքստում:

Եկեղեցու մասին ավանդական, բարենորոգչական եւ մոդեռնիստական ըմբռնումների հակադրությունը, ինչպես նաեւ հետմոդեռնիստական (միաստիճան պրեսբիտերական, կոնգրեգացիոնալիստական եւ այլն) զուգահեռ կառույցների առկայությունը, դրանց եկեղեցաբանական նորովի մեկնությունները, Եկեղեցու առաքելության հետ կապված տարրմբռնողությունը, էկումենիկ շարժման եւ միջեկեղեցական համագործակցության բնագավառում ընդհանրականի (ընդհանրական Եկեղեցու) եւ մասնավորի (եկեղեցական կոնկրետ կառույցի) փոխհարաբերության հիմնահարցը, ազգ-կրոն-Եկեղեցի առնչությունների եւ կրոնական համագործակցության աստվածաբանական հիմնավորման առաջնահերթությունները. ահա այն հիմնահարցերի շրջանակը, որոնք կազմում են Վեհափառ Հայրապետի եկեղեցաբանական հետաքրքրությունների ոլորտը: Եվ պետք է նշել, որ, հանձին Վեհափառի համակողմանի եւ հավասարակշռված մոտեցման, առնչվում ենք աստվածաբանական մի հայեցակարգի, որն իր էությամբ խարսխված է Հայ Եկեղեցու սրբագործված ավանդական մոտեցումների վրա, իսկ մյուս կողմից՝ համարժեք մոտեցում է ցուցաբերում այդ հարցում արդի եկեղեցաբանական հայեցակարգերի հիմնարար մոտեցումների նկատմամբ: Ավանդականի եւ նորի համադրմամբ ձեւավորված այդ նրբին եկեղեցաբանությունն էլ Հայրապետի կողմից ներշնչանքով մատուցվում է հայ ժողովրդին:

«Ինչ է Եկեղեցին» հարցին Գարեգին Բ Հայրապետն անդրադառնում է աստվածաշնչագիտության, քրիստոնեական գոյաբանության եւ մետաֆիզիկայի դիրքերից: Այդ մոտեցմամբ Եկեղեցու պատմությունը ներկայացվում է որպես Աստծու խոսքը սերունդներին մատչելի դարձնելու շարունակական գործընթաց: Եվ քանի որ այդ հայեցակարգի հիմնավորման գործում հավասարապես օգտագործվում է ինչպես ընդհանրական, այնպես էլ Հայ Եկեղեցու հոգեւոր պրակտիկան, միանգամայն տրամաբանական է եզրակացնել, որ առաջադրված եկեղեցաբանական հայեցակարգի տարածական ֆոնը քրիստոնեությունն է, իսկ մեկնակետը՝ Հայ Եկեղեցու վարդապետությունը:

Հիմնարար այդ սկզբունքների դիրքերից Վեհափառն առաջադրում եւ հիմնավորում է ուղղադավան մի հայեցակարգ, որտեղ Աստվածաշնչի տեքստային մեկնաբանության հենքի վրա Եկեղեցու էությունն ամենից առաջ բնութագրում է որպես «Աստծու ժողովուրդ», «Քրիստոսի մարմին» եւ «Սուրբ Հոգու Տաճար» եզրերով: Եւ որ չափազանց կարեւոր է, քննարկվող հիմնահարցերը գոյաբանորեն շաղկապվում են անձնավորման վարդապետության հետ, որի դիրքերից Հայոց Հայրապետը հավաստում է. «Աշխարհը սպասում էր Փրկչին: Աշխարհը լի էր սպասումով: Հին աշխարհը բռնատիրության իր բարքերով, մարդկանց ու ժողովուրդներին օտարացնող, թշնամացնող հարաբերություններով ավելի ու ավելի էր կորցնում բարոյական իր արժեքն ու պատկերը եւ ճիրաններում մեղքի կապանքների ու հոգեկան տվայտանքների՝ սպասում էր ազատության, արդարության ու խաղաղության Ավետարերին: Եւ Նա եկավ ի լրումն ժամանակի: Մարդասեր Աստված Արարչական Իր

Սիրով վերսրին ընդառաջ ելավ տկարացած եւ անկյալ մարդուն՝ առաջնորդելու նրան դեպի հավիտենական կյանքի փրկարար ուղի...»[3]:

Նա միաժամանակ ցույց է տալիս, որ Անձնավորված Քրիստոսը ճշմարտությունն ավանդելու համար չի սահմանափակվել միայն քարոզներով, այլ Աստվածային ճշմարտությունն արմատավորել է հասարակական կյանքում, որը դարձել է կենսակերպ եւ կենցաղի անբաժան մաս: Եվ դրանով արդեն իսկ երկրային կյանքում հավատքի վրա կառուցված համայնական (համայնքային) կյանքով քրիստոնյաները կարողացան մերձենալ Աստծու Արքայությանը: Եվ Քրիստոս փրկագործական առաքելությունը շարունակելու համար հիմք դրեց Եկեղեցուն, որը պետք է հարատեւեր աշխարհում: Այդ մեկնակետի դիրքերից Վեհափառը հիմնավորում է նաեւ, որ եկեղեցական համայնքը, Եկեղեցին Հիսուս Քրիստոսի գործի շարունակությունն է եւ որ Եկեղեցին կազմված է Աստծու ժողովրդից, այսինքն՝ հանդես է գալիս որպես Կենդանի Աստծու Տաճար: Ելակետ ունենալով աստվածաշնչական այն պատգամը, թե՝ «... դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք, որպէս ասաց Աստուած թէ Բնակեցայց ի նոսա եւ գնացից ի նոսա, եւ եղէց նոցա Աստուած եւ նոքա եղիցին իմ ժողովուրդք (Բ Կոր., Զ 16)», Վեհափառը փաստում է, որ Եկեղեցին պատկանում է Աստծու ժողովրդին եւ հակառակը: Աստվածաշնչագիտական մեկնությամբ Գարեգին Բ Վեհափառը հիմնավորում է եւ այն, որ հանձին Եկեղեցու առնչվում ենք այնպիսի կենսաձեւի, որը հավատքի վստահությամբ եւ համայնական նկարագրով նշանավորում է նոր ժամանակների ծնունդ: Այդ դիրքերից էլ նա գրում է. «Պատմության մեջ ակնթարթ է կարճատեւ այն ժամանակահատվածը, որ Մարդացյալ Աստված՝ Հիսուս Քրիստոս, գործեց մարդկանց մեջ: Այդ ակնթարթը փոխեց ժամանակի ընթացքը՝ ամենուր հաստատելով առ Աստված Հավատքի վստահություն, Հույսի լավատեսություն, Սիրո ջերմություն, Սիրով՝ հաշտություն միմյանց եւ Աստուծո հետ: Եվ արդ, սիրելինե՛ր, բաց է ճանապարհը դեպի Աստված, եւ մեզ է թողնված ընտրությունը»[4]:

Ակնհայտ է, որ առաջադրված եկեղեցաբանական հայեցակարգի հիմնադրույթներից մեկն էլ այն է, որ հավատքի վրա հենված եւ Քրիստոսի կողմից հաստատված մարդկային նոր կենսաձեւը՝ Եկեղեցին, ծնվել է իր հետնորդներին աստվածային սիրով միավորելու նախաձեռնությամբ, քանի որ «Քրիստոս սիրով է շաղախում Իր Եկեղեցու ամեն մի քարը եւ կառուցում այն՝ Սուրբ Հոգու պարգեւած սիրո միջոցով մեզ միացնելով Իրեն՝ իբրեւ Իր մարմնի անդամներ»[5]: Աստվածաշնչագիտական մեկնությամբ Գարեգին Բ Վեհափառը բացահայտում է Եկեղեցու էությունն արտացոլող ընդհանրական մի այլ հատկանիշ եւս: Նա հավաստում է, որ թեեւ գոյաբանորեն Եկեղեցում տիրապետող է հավաքական կյանքով արտահայտվող կոլեկտիվ կենսակերպը, այդուհանդերձ, նրա անդամներն ամենեւին էլ չեն զրկվում անհատականությունից: Հակառակը, «Քրիստոս, որպես սիրո գերագույն օրինակ,

3 **«Էջմիածին»**, 2000, Ա, էջ 9:
4 **Անդ,** էջ 10:
5 **«Էջմիածին»**, 2008, Ե, էջ 23:

միմյանց սիրել մեզ ավանդեց, Իր Եկեղեցին հիմնեց որպես երկնային սիրո հարկ երկրի վրա, որպեսզի մարդկային ցեղի որդիներս որդեգրության շնորհով այդ մեծ տան Հոր զավակները լինենք: Եւ եթե այդ ընտանիքի «մի որեւէ անդամ ցավ զգա, նրա հետ ցավ զգան բոլոր անդամները. եւ եթե մի անդամը փառավորվի, նրա հետ ուրախանան բոլոր անդամները» (Ա Կոր., ԺԲ 26)»[6]: Եկեղեցաբանական ընդհանրացնող մոտեցմամբ Վեհափառը հիմնավորում է եւ այն, որ Աստվածային նախախնամությամբ ձեւավորվելով հասարակական կյանքում՝ իր պատմական ընթացքի մեջ Եկեղեցին ինստիտուտային տեսք եւ հասարակական նկարագիր է ստանում: Ուստի պետք է ընկալվի նաեւ այդ որակով՝ որպես հասարակական կյանքի եւ բնական պայմանների դրսեւորման յուրահատուկ ձեւ:

Եւ քանի որ իբրեւ Աստծու ժողովուրդ Եկեղեցին կարիք ունի փոխադարձության, Վեհափառ Հայրապետն անդրադառնում է Եկեղեցու բնութագրական այդ որակի մեկնությանը եւս: Եւ այդ գործում նա կարեւորում է հատկապես հոգեւոր կյանքի հիմքը կազմող «Աստվածատուր հավատը» եւ այդ ակունքից բխող աստվածսիրությանը: Հավատը մեկնաբանելով որպես Աստվածային սիրո դրսեւորում՝ Վեհափառը գրում է. «Իր սիրով ու ողորմությամբ Աստված հավատի լույսը շնորհեց մեր հայրերին, հավատի լույսով պահպանեց Արարատի փեշերին, դարեր-դարեր խնամեց ու աշխարհասփյուռ պահպանեց՝ հավատի լույսով առաջնորդելով ազգս հայոց դեպի Սուրբ Էջմիածին: Ընտրեց մեզ լինելու սեփական ժողովուրդ, օրհնեց հավատարմությամբ եւ բազում հաղթանակներ պարգեւեց հավատի զորությամբ: Հավատով սնված ու ջերմացած՝ շքեղորեն ծաղկեց մեր մշակույթը, հավատով անմար մնացին Հայրենիքի ու ազատության սերը մեր ժողովրդի հոգում ու հաղթանակած փայլեցին Ավարայրից մինչեւ Սարդարապատ ու մեր օրերի Արցախյան ազատամարտերը»[7]: Եւ կարեւորելով փոխադարձության սկզբունքը՝ միաժամանակ հավաստում է եւ այն, որ «... աստվածսիրությունն է, որ բարի պտուղներ է ապահովում մարդկությանը, եւ մարդկանց հոգիները լցվում են աստվածային պատվիրաններով, ու մարդիկ գիտակցաբար իրենց կյանքը կազմակերպում են այդ պատվիրանների համաձայն՝ միմյանց սիրելու, միմյանց ներելու, միմյանց զորակցելու, մեկը մյուսի երջանկությամբ ցնծալու»[8]:

Աստվածաշնչագիտության եւ հայրաբանական ավանդության դիրքերից է մեկնաբանվում նաեւ Եկեղեցու «Քրիստոսի մարմին» լինելու հիմնադրույթը: Եկեղեցին որակելով որպես «Հարուցյալ երկնավոր Փրկչի երկրավոր բնակարան»[9]՝ Գարեգին Բ Վեհափառը փաստում է, որ Քրիստոս միաժամանակ Եկեղեցու առանցքն է եւ ծառայության կենտրոնը, քանզի Եկեղեցին մեկ է Քրիստոսով եւ իր առաքելությամբ[10]:

---

6 **Անդ**:

7 «Էջմիածին», 2005, Զ, էջ 49:

8 **«Էջմիածին»**, 2000, Թ, էջ 23-24:

9 **«Էջմիածին»**, 2000, Ա, էջ 69:

10 «Մենք ... հավատում ենք Մի, Կաթողիկե, Առաքելական եւ Սուրբ Եկեղեցու, - այդ կապակցությամբ հռչակում է Վեհափառը, - Արդարեւ, **Եկեղեցին, ինչպես Քրիստոսի մարմինը, մի է եւ եզակի** (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)», **«Էջմիածին»**, 2000, ԺԱ, էջ 10: Ըստ Վեհափառի՝ Եկեղեցու

Քրիստոսի մարմին Եկեղեցին հանդես է գալիս նաև որպես հավատացյալների ամբողջություն, քանի որ Քրիստոսի փրկարար Խաչով է միավորվում ամենայն ինչ: Այդ մոտեցմամբ եկեղեցաբանը Քրիստոսի փրկարար Խաչին ապավինելը եւ նրանով միավորումը մեկնաբանում եւ որակում է որպես Եկեղեցու էական հատկանիշներից մեկը: Եկեղեցին որակելով որպես աննյութական այնպիսի կառույց, որն առ Քրիստոս ունեցած սիրո եւ հավատի շնորհիվ վերաճում է սուրբ տաճարի[11]՝ միաժամանակ Հայ Եկեղեցու օրինակով Վեհափառը միանգամայն հիմնավորված կերպով ցույց է տալիս, որ «Իր օրհնաբեր ներկայությամբ, իր փրկագործ խորհրդով մեզ միշտ հովանի է եղել զորությունը Սուրբ Խաչի՝ հանդիսանալով այն նեցուկը, որին ապավինել ենք մեր ընթացքներում, այն ցուպն ու գավազանը, որով մովսիսանման հաստատակամությամբ կարողացել ենք երկփեղկել ազգիս դառնությունների ու փորձանաց ալեկոծյալ ծովը: Խաչի զորությամբ անցանք Մեծ Եղեռնի գողգոթայի ճանապարհներով եւ վերապրեցինք՝ հասնելով խաղաղ ափերը մեր նոր ու վերածնված կյանքի»[12]:

Անշուշտ, արդի պահանջներին համահունչ եկեղեցագիտական այդ մեկնությունը նաև նոր հարցումներ է բովանդակում, սակայն անուրանալի է եւ այն, որ դրանք եւս կրում են Եկեղեցու խորհրդապաշտպական դրոշմը՝ որպես Աստծո ժողովուրդ եւ որպես Քրիստոսի խորհրդապաշտպական մարմին: Փաստական նյութի վերլուծական ընդհանրացմամբ՝ Գարեգին Բ Վեհափառը հիմնավորում է եւ այն, որ մեզանում փրկարար Խաչի հավատը դարձել է կյանքի անբաժանելի ուղեկիցը, մեր ազգային կենսակերպը եւ ազգամշակութային կյանքի ներշնչանքի աղբյուրը եւ որ «դարերի ընթացքում խաչի ապավինությունը հայցող այս աղոթքով է ապրել ու ստեղծել մեր ժողովուրդը: Խաչով է պսակել գմբեթները եկեղեցիների, խաչի գեղանի պատկերաքանդակները կերտել, խաչով ծաղկել հազարագանձ մատյանները աղոթալի, խաչի գովքն ու փառաբանությունը՝ որպես աղոթք ու շարական, երկինք վերառաքել (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»[13]:

Գարեգին Բ Վեհափառի եկեղեցաբանական հայեցակարգի համար բնութագրական են նաեւ Եկեղեցու՝ իբրեւ Քրիստոսի մարմնի ընդհանրացնող այլ մեկնություններ: Նա մասնավորապես մատնա- նշում է, որ Քրիստոսի մարմին Եկեղեցին գոյաբանորեն ենթադրում է նաեւ համայնքի բոլոր անդամների փոխադարձ կապ եւ ամենօրյա հարաբերություն: Եվ այդ համատեքստում նա կարեւորում է Եկեղեցու փոխադարձության երկու կարեւոր գործառույթներ, որով հիմնովին մերժվում է հավատը դիտարկել որպես Աստծու հետ ունեցած անձնական հարաբերություն (նույնն է՝ անհատական հավատք) եւ երկրորդ, պրակտիկ եկեղեցական կյանքում իսպառ բացառում է ամեն մի մեկուսացում: Վերլուծաբանի հավասարության եւ փոխա-

---

մեկության հիմքերից մեկն այն է, որ եկեղեցին «... հիմնված է սիրո վրա եւ մերժում է ամենայն հակառակություն եւ ատելություն, քանզի ամենասուրբ սերն է ընդհանրական սուրբ ընտանիքի ամուր պատվարը, ... միմյանց հետ կապող շաղախը», **«Էջմիածին»**, 2008, Ե, էջ 23:

11 Տե՛ս **«Էջմիածին»**, 2000, ԺԱ, էջ 13:

12 **«Էջմիածին»**, 2006, Զ, էջ 26:

13 **Նույն տեղում**:

դարձության եկեղեցական սկզբունքը մակաբերվում է նաեւ աստվածաշնչական այն հավատամքից, թե հավատի կատարյալ միության եւ Աստծու Որդու ճանաչման նպատակով ամեն մի հավատացյալի տրված է շնորհի որոշակի բաժին (Տե՛ս Եփես., Դ, 11-16):

Հոչակելով, որ «Երկնային մեր Վարդապետը հաղթեց իր խոսքին համարժեք գործերով»[14], որ հասարակական եւ ազգային կյանքում Բեթղեհեմի Լուսաստղի շողերով է հաստատվում իրական հոգու անդորրը, հաշտությունն ու երջանկությունը[15], եւ որ մարդացյալ Աստծու նորից ծնունդ առնող Փրկչական սերը, խաղաղությունը, արդարությունը եւ բարին են պայմանավորում Հիսուսի հետ ժամադրությունը[16], Հայոց Հայրապետն այդ ամենի հիման վրա Եկեղեցու զորացման հիմք եւ հավատացյալների միավորման ու գործունեության առանցք է հոչակում Հիսուս Քրիստոսի փրկագործական առաքելությունը: Նկատենք նաեւ, որ այս պարագայում Եկեղեցին ներկայացվում է իր ներքին խորհրդի մեջ՝ իբրեւ աստվածային Երրորդությամբ շաղախված եւ Ս. Երրորդության հավատքի վրա խարսխված Հաղորդություն: Եվ ինչպես իրավամբ աստվածաբանն է նկատում, եկեղեցաբանական այդ մոտեցումը հավատացյալների հոգում կարող է վերակենդանացնել այն, ինչը հոգեւոր առումով ճշմարտապես գոյություն ունի կենդանի ավանդության մեջ: Դա միաժամանակ կոչ է հավատացյալներին՝ հոգեւորի տեսիլքով գինված շրջվել դեպի Եկեղեցու տեսանելի իրականություն՝ ներդաշնակորեն միմյանց զուգակցելով հավատը եւ խոհականությունը: Վեհափառ Հայրապետը փաստում է նաեւ, որ Եկեղեցին ավելին է, քան սոսկական հաստատությունը կամ ընկերությունը, հավասարապես նաեւ անձերի միջեւ առկա ամենօրյա հաղորդակցությունը:

Իր մեկնություններում Վեհափառը նրբորեն անցում է կատարում նաեւ Եկեղեցու աստվածաշնչական հիմնարար մի այլ պատկերի՝ «Սուրբ Հոգու Տաճար» լինելու մեկնությանը: Նա ցույց է տալիս, որ Եկեղեցին իրական Տաճարի եւ անտես (գերբնական) կյանքի ակունքի է վերածվում Սուրբ Հոգու շնորհիվ: Համակողմանի հիմնավորելով այն, որ հավատացյալները Սուրբ Հոգու մշտական առկայությանն ու միջնորդությանն են պարտական Եկեղեցու գործունյա անդամ կոչվելու համար՝ նա գրում է. «Այս բացարձակ նմանը չունեցող սիրո հաղորդության միջոցով է Աստված մեզ հաղորդակից դարձնում Իր Սուրբ Հոգու շնորհներին եւ արժանացնում Իր որդեգրությանը: Աստված Իր Սուրբ Հոգով մեզ բոլորիս դարձնում է մեկ Հոր՝ Աստծո որդիներ եւ ժառանգներ»[17], այսինքն նաեւ՝ Աստծու ժողովուրդ:

Փաստական նյութի վերլուծությունն աներկբա վկայում է, որ Եկեղեցու «Սուրբ Հոգու Տաճար» լինելու Գարեգին Երկրորդի եկեղեցաբանական վարդապետության ակունքներում ևս ընկած են աստվածաշնչագիտությունը եւ ուղղադավան հայրաբանության ավանդությունը: Ինչպես Նոր Կտակարանն է փաստում, Եկե-

14 **«Էջմիածին»**, 2000, Ա, էջ 11:
15 Տե՛ս **նույն տեղում**, էջ 12:
16 Տե՛ս **նույն տեղում**, էջ 46-47, 68:
17 **«Էջմիածին»**, 2008, Ե էջ 22-23:

«Դի դցուցեք դեպի»

ղեցին իրական գոյ է դարձել Սուրբ Հոգու էջքով եւ Նրա ներգործության եւ շնորհազարդման միջոցով է հանդես գալիս հարատեւ գոյի կարգավիճակով: Եվ Վեհափառի գրչով Տնօրինական այդ գործընթացը մեկնաբանվում է հետեւյալ կերպ. «Սուրբ Հոգու էջքով առաքյալների վրա եւ երկրից երկիր նրանց քարոզությամբ սկզբնավորվեց Քրիստոսի Սուրբ Եկեղեցին, աճեց ու զորացավ սիրո մեջ եւ միշտ պտղաբեր եղավ, երբ չպակասեց սերը Եկեղեցուց ներս»[18]: Եւ արգասավորվելով Ս. Հոգով՝ Եկեղեցին եւ հավատացյալ հոտն ստացան նաեւ Հոգու պտուղները: Այդ դիրքերից է Վեհափառը փաստում եւ այն, որ «Հոգեզալուստը տոնն է Սուրբ Հոգու ներգործության, շնորհազարդումը մեր անձերի ու հոգիների, որն ամրագրում է մեր մեջ սիրո ու համագործակցության ոգին, առաջնորդում դեպի ամենաբարին, ամենալավը, ներշնչում մեզ արիություն, ուժ եւ քաջություն՝ առանց բռնանալու յուրաքանչյուրիս մտածելու եւ գործելու ազատությանը»[19]:

Փաստական նյութի վերլուծությունն, այսպիսով, աներկբա վկայում է, որ եկեղեցաբանական այս հայեցակարգը մատուցվում է որպես հավատքային սկզբունքների եւ պատկերացումների օրգանական ամբողջություն: Եվ այդ տեսանկյունից իր տրամաբանությամբ, բովանդակային առանձնահատկություններով եւ հավատքային ուղղվածությամբ Գարեգին Բ Հայրապետի եկեղեցաբանությունը յուրատիպ պատասխան է նաեւ Եկեղեցու դեմ ուղղված արդի մարտահրավերներին, քանի որ գործնականում հանդես է գալիս հավատքային անաղարտության հիմնավորման եւ մեկնաբանության որակով: Եվ բոլոր հիմքերն ունենք պնդելու նաեւ, որ քրիստոնեական մարդաբանության եւ մարդասիրության հիմնարար սկզբունքներն արտացոլող այս մոտեցումներն առաքելական ժառանգորդության անուրանալի փաստեր են, իրական հավատամք, որի հիմքում ընկած են քրիստոնեական սիրո եւ Եկեղեցու աստվածային առաքելության մասին աստվածաշնչական պատգամները:

Աստվածաբանական տեսանկյունից Վեհափառ Հայրապետի եկեղեցաբանությունը պետք է դրական որակել այլ առումներով եւս: Այն դրական է քրիստոնեական մետաֆիզիկայի եւ գոյաբանության տեսանկյուններից, քանի որ խարսխված է Ս. Երրորդության ուղղադավան ըմբռնումների վրա: Դրական է եւ այն առումով, որ այդ հայեցակարգն էական հարցերում հակադրվում եւ տարբերվում է նախորդ դարաշրջանների աստվածաբանական միակողմանի մոտեցումներից: Գարեգին Բ-ի եկեղեցաբանությունը կենսահաստատ է, որին ներհատուկ է հավատքային անանց ճշմարտությունների հիման վրա առանձնահատուկի եւ բազմազանության ներդաշնակեցման միտումը: Ճիշտ այդպես էլ, նրա մոտեցումը ներհատուկ է նաեւ բանավիճային ոգին, որը սակայն ոչ թե միտված է այս կամ այն եկեղեցական-աստվածաբանական համակարգի դեմ, այլ բացառապես՝ հավատքային շեղումների եւ եկեղեցական ավանդությանը հակադրվող դենոմինացիաների ու մոլորությունների դեմ: Այն վերահաստատում է եպիսկոպոսական եկեղեցու վերաբերյալ ընդհանրա-

18 **«Էջմիածին»**, 2004, Զ, էջ 19, տե՛ս նաեւ **«Էջմիածին»**, 2008, Ե, էջ 26:
19 **«Էջմիածին»**, 2008, Ե,էջ 22:

կան ավանդական մոտեցումը եւ հակազդեցություն մեջ է միայն մոդեռնիզմի արատավոր դրսեւորումների հետ:

Ավելացնենք նաեւ, որ Վեհափառ Հայրապետի աստվածաբանական մոտեցումների կիզակետում գտնվող եկեղեցաբանական լուծումներն անմիջականորեն կապված են նաեւ հավատքային հիմնարար նշանակություն ունեցող փրկագործական վարդապետության հետ եւ բխում են նրանից: Դա ուղղակի վկայությունն է այն բանի, որ աստվածաբան նվիրապետի կողմից եկեղեցաբանությունը դիտարկվում է որպես դավանաբանության հետ սերտորեն կապված եւ եկեղեցական դավանանքից ուղղակի բխող իրողություն: Այդ համատեքստում պետք է կարեւորել ցափազանց էական մի այլ միտում եւս: Եթե մետաֆիզիկական եւ գոյաբանական տեսանկյունից Վեհափառ Հայրապետի եկեղեցաբանությունը սերտորեն շաղկապված է աստվածաշնչագիտական եւ հայրաբանական ուղղադավանության հետ, ապա կրոնական փորձի տեսանկյունից այն սերտաճում է ընդհանրական եւ Հայ Եկեղեցու պատմության հետ, ինչն էլ հանդիսանում է աստվածաբան Հայրապետի եկեղեցագիտական մոտեցումների պատմական հիմքը:

Եկեղեցաբանական այս հայեցակարգի հիմնարար բնութագրումների շարքում պետք է կարեւորել աստվածաբանական մտածողության հիմնարար մի այլ սկզբունք եւս. համակարգային մեկնաբանությունը: Այդ մոտեցմամբ աստվածաբան նվիրապետը նշանակություն եւ իմաստ է վերագրում կրոնական երեւույթներին: Գարեգին Բ Հայրապետն այդ համատեքստում է անդրադառնում Եկեղեցու առանցքային բնութագրիչներից հաջորդի՝ ծառայության համակողմանի արժեւորմանը: Արդի հոգեւոր եւ հասարակական կյանքի խորն ընկալմամբ նա այդ հիմնահարցի եկեղեցաբանական մեկնաբանության գործում մեկնակետային է համարում այն, որ «Բարդ աշխատանք է, դժվարին աշխատանք է հավատավոր հոգի կերտելը, եւ մարդկային հոգում հավատ զետեղելը, Աստծո բնակարան հաստատելն ամենաբարդ եւ ամենադժվարին աշխատանքն է: Այն առաջին հերթին պահանջում է կենդանի օրինակ եւ այդ կենդանի օրինակը նախ մենք՝ եկեղեցականներս պետք է ներկայացնենք մեր ժողովրդին: Որքան էլ քարոզենք, ինչ գրականություն էլ որ պատրաստենք, արդյունքը բավարար չի լինի եւ արդյունք չի տա, եթե չլինի կենդանի քարոզչությունը»[20]:

Աստվածաբանական, պատմաբանասիրական եւ ազգային կյանքը բնութագրող այլ օրինաչափությունների համադրության դիրքերից անդրադառնալով եկեղեցական ծառայության էական հատկությունների բացահայտմանը՝ Վեհափառը հիմնավորում է, որ այդ մոտեցումը թույլ է տալիս խորապես յուրացնել եւ արժեւորել Եկեղեցու ինչպես գործառնության, այնպես էլ պատմականության առանձնահատկությունները: Հայրապետը հաջորդաբար անդրադառնում է նաեւ եկեղեցական ծառայության ձեւերի եւ դրանց գործառնական առանձնահատկությունների վերլուծական արժեւորմանը: Անվերջի եւ վերջավորի, իռացիոնալի եւ ռացիոնալի,

20 **«Էջմիածին»**, 2007, ԺԱ, էջ 17:

գերբնականի եւ բնականի փոխհարաբերության մեկնությամբ մատնանշում է այն մեխանիզմների ամբողջությունը, որոնց օգնությամբ բացահայտում է եկեղեցական ծառայության էությունը: Իսկ վերջինս նրա կողմից անքակտելիորեն կապվում է Ավետարանի քարոզչության (հավատքի), քրիստոնեական անսակարկ սիրո եւ աննկուն հավատարմության հետ: Եկեղեցական պատմության ընդհանրացված վերլուծությամբ նա ցույց է տալիս, որ «Ավետարանի քարոզության հետ մարտիրոսությունը տարածվեց ժողովուրդների ու ազգերի մեջ՝ որպես բարոյականության մեծագույն դրսեւորում, անսակարկ սիրո եւ աննկուն հավատքի ու հավատարմության արտահայտություն, իբրեւ մահ իմացյալ, որ անմահություն է»[21]:

Մերժելով տեսանելի եւ անտես Եկեղեցու, հավասարապես նաեւ՝ Եկեղեցու գործառնության աշխարհիկ եւ հոգեւոր տեսանկյունների հակադրության կամ դրանք առանձնության մեջ դիտարկելու ծայրահեղ մոտեցումները՝ Գարեգին Բ Վեհափառը խորհրդապաշտպական ասպվածաբանության նրբին մոտեցմամբ եկեղեցական պրակտիկայում հավիտենականի ու անփոփոխի կողքին արժեւորում է նաեւ վերջավորն ու սահմանափակը: Այդ դիրքերից նա ուրվագծում է Եկեղեցու ծառայության ու գործառնության մի այնպիսի համայնապատկեր, որտեղ քրիստոնեական սիրով շաղախված հոգեւոր եւ աշխարհիկ գործառնությունները դիտարկվում եւ արժեւորվում են ներդաշնակ համագործակցության մեջ, իսկ դրանց միջեւ առկա կապին համապարփակ տեսք է տրվում:

Ահա թե ինչու անդրադառնալով հասարակության զարգացման շրջափուլերի հոգեւոր հիմքերի եւ դրանցում Եկեղեցու պատմական դերի արժեւորմանը՝ ասպվածաբան Հայրապետը փաստում է, որ Եկեղեցու ծառայության եւ ընդհանրապես եկեղեցական պրակտիկայի տեսանկյունից հոգեւորը եւ հասարակականն օրգանապես կապված են միմյանց: Եւ քանի որ հասարակության հոգեւոր պրակտիկայի համար ուղենիշ է հանդիսացել Եկեղեցու ծառայության էությունը բնութագրող այն համոզմունքը, թե՝ «... Սիրո հաղթանակն է Քրիստոս. Ասպուծո Սերն է առ մարդը, մարդու Սերը առ Ասպված, մարդու Սերը առ իր նմանը»[22], այդ մեկնակետից Հայ Եկեղեցու նվիրապետը ընդհանրացնելով փաստում է, որ հայ ժողովրդի պատմությունը հոգեւորի եւ աշխարհիկի ներդաշնակ զուգորդման պատմություն է, որ հավատքի եւ գործի, հոգեւորի ու աշխարհիկի, Ավարայրի եւ Սարդարապատի ճանապարհով է մեր ժողովուրդը դարձել «Ասպծու սեփական ժողովուրդ»[23]: Այդ ամենով հանդերձ եկեղեցագիտական այդ մոտեցմամբ Գարեգին Բ Հայրապետն անվերապահորեն հավաստում է, որ իր ծառայական կերպի մեջ Եկեղեցին հանդես է գալիս որպես անտես հոգեւորի եւ տեսանելի բաղադրատարրերի գոյաբանական ամբողջություն: Ուստի պետք է եզրակացնել, որ այդ ներդաշնակությունը մերժելու ամեն մի փորձ սխալ է եւ՛ ասպվածաբանական առումով, եւ՛ պատմականորեն: Հավասարապես անթույլատրելի եւ անընդունելի է նաեւ այդ ներդաշնակության

21 **«Էջմիածին»**, 2005, Թ, էջ 7:
22 **«Էջմիածին»**, 2000, Ա, էջ 11:
23 Տես անդ, էջ 68:

որեւէ կողմի գերագնահատումը եւ բացարձակեցումը: Բանն այն է, պարզաբանում է ասպվածաբանը, որ իբրեւ զուտ հոգեւոր իրողություն՝ ծառայությունը դրսեւորվում է որպես միանգամայն բարդ եւ բազմաշերտ ոլորտ:

Այսպիսով, ներեկեղեցական կյանքը համակողմանի արժեւորելու դիրքերից Գարեգին Բ Հայրապետը եկեղեցական ծառայությունը որակում է որպես բազմաբեւեռ գործընթաց: Սակայն նրա տեսադաշտից չի վրիպում եւ այն, որ հայտնի սահմաններում Եկեղեցու ծառայությունը կարող է ուղեկցվել նաեւ որոշակի խզման կետերով, որոնց ազդեցությամբ եկեղեցական ավանդական պրակտիկան կարող է շաղկապվել «համագործակցության նոր ուղիների» որոնման հետ: Աստվածաբանն այդ ոլորտի վերլուծությանն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում, քանի որ նշված գործընթացը սերտորեն կապված է ընդհանրության (Եկեղեցու) հավատքային հիմնարար սկզբունքների հետ: Նաեւ այն պատճառով, որ դրանց մեկնաբանության գործում առաջադրվել են աստվածաբանական տարբեր (երբեմն՝ հակադիր) մոտեցումներ եւ տարբեր մեթոդաբանական սկզբունքներ: Այդ իսկ պատճառով էլ նրա աշխարհընկալմանը լիովին հարիր է ուղղադավան այն համոզմունքը, որ «Եկեղեցու զորությունը համայն հավատացյալ ժողովրդի ճշմարիտ հավատքն է: Ճշմարիտ հավատքով միավորվում եւ լինում ենք տաճար Սուրբ Հոգու: ... Մեր հոգեղեն տաճարացումը Սուրբ Հոգով իրականություն է դառնում հատկապես աղոթավայր-սրբատեղիների օրհնաբեր հարկի ներքո՝ ընդհանրական ու աղոթաշաղախ միությամբ»[24]:

Անվիճելի է, որ Եկեղեցու ծառայության աստվածաբանական վերլուծության եւ մեկնության հավասարակշռված արժեւորումներով Գարեգին Բ Վեհափառը պահանջվող ուշադրությամբ է վերաբերվում այն փաստին, որ մարդու եւ Աստծու միավորմանը միտված Եկեղեցու խորհրդավոր կյանքը հասարակական-քաղաքական տեղաշարժերի եւ զարգացման գործընթացներում հանդես է գալիս որպես բաց համակարգ: Դրանով եկեղեցաբանական նրբին եւ հավասարակշռված մոտեցմամբ շեշտադրվում է, որ Եկեղեցու ծառայական բազմաշերտությունը յուրատիպ երկխոսություն է, որի միջոցով քրիստոնեական համայնքի խորհրդավոր կյանքը, աստվածսիրությունն ու ծառայասիրությունը ներդաշնակ կերպով զուգակցվում են նույն այդ հավատքային ընդհանրության մարդկային ջանքերի՝ քաղաքական, քաղաքացիական, հասարակական, ազգային եւ այլ պարտականությունների հետ: Այլ կերպ ասած՝ նա առաջադրում եւ հիմնավորում է այն թեզը, որ պրակտիկ կյանքում Աստծո ժողովրդի վկայությունը մարմնավորվում է նաեւ աշխարհիկ գործողությունների եւ պարտավորությունների տեսքով:

Հանրային կյանքի առանձնահատկությունների հետեւողական վերլուծությամբ Վեհափառ Հայրապետը հանգում է այն հետեւության, որ պրակտիկ կյանքի գրեթե բոլոր ոլորտներում մարդն առաջնահերթ կարիք ունի օտարումը հաղթահարելու եւ մարդասիրական հարաբերություններ հաստատելու: Իսկ հասարակարգերը փորձ

24 **«Էջմիածին»**, 2007, ԺԱ, էջ 8:

են կատարում այդ առաջնահերթությունները լուծել մարդակենտրոն մոտեցմամբ՝ մարդու լիակատար ինքնավարության, ինքնորոշման եւ բազմակարծության հիման վրա, ինչը շատ անգամ ծայրահեղ տեսք է ստանում: Հակասական այդ միտումներն էլ, փաստում է ասփվածաբանը, ի վերջո հանգեցնում են այն բանին, որ «... զուտ աշխարհիկի հետեւորդները հոգեւոր արժեքների եւ ավանդությունների քննադատությամբ փորձում են նվազեցնել Եկեղեցու եւ կրոնի դերը հոգեւոր եւ բարոյական արժեքների ձեւավորման եւ պաշտպանության գործում, մեկուսացնել այն հանրային կյանքից: «Խղճի ազատությունը» մեկնաբանվում է իբրեւ ազատություն խղճից, ազատություն երկրպագելու ոչ թե Աստծուն, այլ այլազան կուռքերի, ներառյալ դրամը, իշխանությունը եւ այլն: Աշխարհայնացված աշխարհի արժեքները, փաստորեն, փոխակերպվում են, եւ կրոնը դառնում է «ազատ շուկայի» առարկա»[25]:

Եվ քանի որ վերլուծական այդ դաշտում ակամա խաչվում են նաեւ ավանդականը եւ մոդեռնը, եկեղեցաբանական հետեւողական լուծումներով ասփվածաբանը մատնանշում է այն ճանապարհը, որը համաշխարհայնացման խառնարանում կարող է տանել դեպի հասարակական կեցության ամբողջական արժեւորում, համամարդկային եւ միջքաղաքակրթական արժեքների ներդաշնակեցում, ազգակրոնական եւ ազգամշակութային ինքնության վերարտադրություն: Վստահ լինելով, որ Եկեղեցին չի կարող կողմնակի դիտորդի կարգավիճակով շրջանցել արդի մարդու գոյաբանական պահանջները՝ Վեհափառը գտնում է, որ այդ հիմնահարցերն անհրաժեշտաբար պետք է քննարկել նաեւ եկեղեցական ավանդության շրջանակներում, բյուրեղացնել հոգեւորի՝ քրիստոնեական մարդասիրության ոսպնյակով, քանի որ մարդու էության եւ բնության հետ կապված ցանկացած հայեցակարգ եւ տեսություն կամա թե ակամա հարաբերվում է նաեւ կրոնական մոդելի հետ:

Փաստական նյութի ընդհանրացնող վերլուծությամբ Գարեգին Բ Վեհափառը ցույց է տալիս, որ համաշխարհայնացման միասնացնող հեռանկարի միակողմանի ընկալումն ու մեկնությունը չափազանց միաձեւ է եւ կենտրոնաձիգ: Այն հաշվի չի նստում ո՛չ ազգային, ո՛չ հոգեւոր եւ ո՛չ էլ քաղաքակրթական բազմազանության հետ: Այդ իսկ պատճառով էլ նրա կողմից առաջադրում է եկեղեցաբանական մի այնպիսի մոդել, որն այդ հարցում առաջնային է համարում քաղաքակրթությունների եւ մշակույթների երկխոսությունը: «Արդի համընդհանրության գործընթացները կարող են համամարդկային նպատակների ծառայել, ստեղծել մնայուն ու ժողովուրդներին փոխադարձաբար իրար կապող արժեքներ ոչ թե ազգային մշակույթների տարբերակիչ հատկանիշների ոչնչացմամբ, այլ մշակութային ու արժեքային հաղորդակցությամբ եւ փոխհարստացմամբ»[26]: Եկեղեցաբանական այդ հիմնադրույթի դիրքերից Վեհափառը գերապատվություն է տալիս արժեքային այն մոտեցմանը, որն արդի մարդու էկզիստենցիալ պահանջմունքների բավարարումն օրգանապես շաղկապում է հոգեւորի եւ նյութականի կատարյալ ներդաշնակեցման հետ: Որպես ասփվածային պատկերի կրող՝ մարդն առանձնահատուկ արժեք է: Եւ

25 **«Էջմիածին»**, 2006, Թ, էջ 17:
26 **«Էջմիածին»**, 2005, Զ, էջ 38:

որպեսզի նա իրապես համապատասխանի այդ կոչմանը, ընտրության իր հնարավորությունը պետք է ծառայեցնի Աստծուն մերձենալուն եւ բարի գործերին: Այդ մոտեցմամբ աստվածաբանը հավասարապես շեշտում է նաեւ Եկեղեցու աշխարհիկ պատասխանատվությունը, քանի որ հավատացյալ մարդը եւ՛ Եկեղեցու անդամն է, եւ՛ աշխարհիկ հարաբերությունների կրողը: Վկան՝ հայոց բազմադարյա պատմությունն է եւ ներքնապես այդ պատմությանը շաղախված կրոնը եւ Եկեղեցին: Այդ միասնությունն է այն հիմքը, պնդում է աստվածաբանը, որի արդյունքում «... քրիստոսանմանություն եղավ ամբողջությամբ մեր քրիստոնեական պատմությունը, եւ նրա էջերը՝ ավետարանական կենդանի ընթերցումներ (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»[27]: Այդ դիրքերից է Վեհափառ Հայրապետը կտրականապես մերժում նաեւ համաշխարհայնացման խառնարանում ակտիվորեն դրսեւորվող առաքելությունների մրցակցության արատավոր պրակտիկան եւ հասարակական կյանքում հոգեւորի ու աշխարհիկի ներդաշնակեցման հիմք է համարում ազգամշակութային ավանդությունների հետ կապված ներկայացուցչական կառույցի, մեր պարագայում՝ ազգային Եկեղեցու հոգեւոր արժեհամակարգը: Եվ վստահ լինելով, որ մեր ազգային կյանքում, «... մեր արմատներում զգում ենք Արարատի լանջին Նոյյան որթատունկի ավշի քաղցրությունը»[28], նա նույնչափ կարեւորում է այն, որ հայն ուր էլ լինի, չի կարող իր «... հոգում մարել Աստվածպարգեւ այն հողի կանչը, որ թաթախված է նախնյաց արյուն-քրտինքով, որ շաղախված է հիշատակներով ու սրբություններով, որից այնքան աղոթք է խնկարկվել առ Աստված»[29]:

Աստվածաշնչագիտությունից բխող եկեղեցաբանական այդ լուծումները թույլ են տալիս փաստել, որ Եկեղեցու գոյաբանական ամբողջությունն արժեւորելով աստվածաբանական հայեցակարգային ըմբռնումով՝ Գարեգին Բ Վեհափառը հաջորդական քայլերով բացահայտում է Եկեղեցու տեսանելի եւ անտես խորհրդանշանների հարաբերակցությունը: Վեհափառը հիմնավորում է, որ անտես Եկեղեցին «... ծննդավայրն է հայ հոգու, մեր հոգեւոր ազգային ինքնության աներեր սյունը, անառիկ ամրոցը ազգիս, մեր տխրության փարատողն ու երջանկության ճանապարհը եւ հույսի ապավենը: **Եկեղեցին նաեւ մեր ազգային ամբողջականության հոգեւոր մարմնացումն է, հոգեւոր մեր Հայրենիքը** (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»[30]: Աստվածաբան Կաթողիկոսը նույնչափ կարեւորում է նաեւ տեսանելի Եկեղեցու գործառնական դերը եւ ընդհանրացնող մոտեցմամբ այն արժեւորելով իր պատմական ընթացքի մեջ՝ պնդում է, որ «հոգեւոր հայրենիքի» պատկերը թերի եւ միակողմանի կլինի առանց այնպիսի անանց արժեքի, ինչպիսին պատմական հայրենիքն է: Եվ քննարկվող եկեղեցաբանական հայեցակարգում **հայրենիքի գաղափարն օժտվում է հավասարազոր սրբությամբ**, քանի որ նրա բարձրագույն դրսեւորումն է համարվում ազգային պետությունը, որի հետ Եկեղեցու կապն

27 **«Էջմիածին»**, 2008, Ե, էջ 19:
28 **«Էջմիածին»**, 2001, Ե, էջ 11:
29Անդ,:
30 **«Էջմիածին»**, 2005, Զ, էջ 10:

ու առաքելությունը մեկնաբանվում է որպես ապրվածային սիրո եւ լույսի դրսեւորման ձեւ, **որպես «Հայկյան մեր զարմի» առաքելության ուղենիշ**: Ահա թե ինչու Գարեգին Բ Վեհափառն ընդհանրացված ձեւով պնդում է, որ **Եկեղեցու առաքելությունից մեկն էլ Հայրենիքի նկատմամբ սերն է**[31]:

Հայոց Հայրապետի համար մեծ աշխարհի այս փոքրիկ հողակտորը որակվում է որպես «թանկագին եւ սրբազան մասունք», «Արարատով չափված ազգային բազմահազարամյա պատմության վկայությունների կենդանի վավերացում»: Հայրենիքը սրբազան է, այն ազգային եւ հասարակական կյանքում Աստծո նկատմամբ սիրո փոխադարձումն է: Հայրենիքը սուրբ է եւ անձեռնմխելի իր ազատությամբ, իր այնքան թանկ ու նվիրական անկախ պետականությամբ: Այդ ամենի առհավատչյան կարելի է համարել հայ ժողովրդին ուղղված Վեհափառի սրտի խոսքը. «Այսօր նաեւ մեր ժողովրդի արի կամքով կանգնեցվել է հայոց պետականության լույսի խորանը, թեեւ բազում զրկանքներով, բազում տառապանքներով, բազում կորուստներով, **սակայն թանկ ու նվիրական յուրաքանչյուր հայորդու համար հայոց անկախ պետականությունը**, որ տեսիլք ու երազ է եղել դարեր շարունակ հայորդու համար, որ նվիրական բաղձանք է եղել յուրաքանչյուր հայ հոգուց ներս, որով ապրել ու գործել է յուրաքանչյուր զավակ մեր ժողովրդի ...: **Գոհություն եւ փառք ենք առ Աստված բարձրացնում, որ աննկուն ոգին ու կամքը մեր ժողովրդի նպատակաուղղվի թանկ ձեռքբերված հայոց անկախությունը ամրագրելուն, հայոց պետությունը՝ քրիստոնեական պետություն ձեւավորելուն, կերտելուն** (ընդգծումները մերն են՝ Ա. Ք.)»[32]:

Հայրենիքն ընկալելով որպես հայ ժողովրդի արյամբ ու հանճարով հանգուցված եւ ապրվածությամբ կնքված բազմադարյա ճանապարհների հանգուցակետ՝ Վեհափառ Հայրապետը չի սահմանափակվում միայն այսօրվա իրողություններով: Նա իր պրպտուն միտքն ուղղորդում է դեպի ապագա՝ եւ հույսով ու հավատով կոչ է անում հանուն այդ գալիքի զերծ մնալ ինքնահանգստացումից, անմնացորդ նվիրվել եւ փայփայել մեր ազգային պետականությունը, բոլոր ուժերն ու միջոցները «սիրաշաղախ պատասխանատվությամբ եւ պարտավորվածությամբ» անմնացորդ ողջակիզել հզոր հայրենիք կերտելու ապրվածահաճո գործին: «Այսօր մենք, շնորհիվ քաջազուն մեր զավակների, վերստին կերտել ենք հայոց անկախ պետականությունը, ազատագրել ենք Արցախը, սակայն անավարտ է, ամբողջական չէ տակավին 1,5 միլիոն հայորդյաց երազը եւ տեսիլը՝ հանուն որի նրանք ընկան, մարտիրոսացան, նահատակվեցին: Այդ երազը հզոր Հայրենիքի կերտումն է, այդ երազը բարեշեն Հայրենիքի ստեղծումն է, այդ երազն այնպիսի Հայրենիքի ստեղծումն է, որտեղ հայորդիք կարողանան իրենց ստեղծագործ աշխատանքով ապրել խաղաղ ու անվրդով (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»[33]: Ազգային այդ առաջնահերթությունների

31 Տես **«Էջմիածին»**, 2000, Ա, էջ 67:
32 **«Էջմիածին»**, 2000, Ժ, էջ 13:
33 **«Էջմիածին»**, 2001, Դ, էջ 32-33:

թվում Վեհափառի հայեցակարգում անդրադարձ է կատարվում նաեւ պետություն-Եկեղեցի հարաբերությանը:

Եվս մեկ բնորոշ առանձնահատկություն: Եկեղեցաբանական արժեւորումներում Վեհափառի խորաթափանց հայացքն ուղղվում է նաեւ հավատքի էությունը բացահայտող հիմնարար այնպիսի հասկացության վերլուծական արժեւորում, ինչպիսին է «սրբացում» հասկացությունը:

Սրբացման երեւույթների հետազոտական ուսումնասիրության գործում Հայոց Հայրապետը լայնորեն կիրառում է աստվածաբանության ֆենոմենոլոգիական մեթոդը: Դա վերլուծաբանին թույլ է տալիս հոգեւոր փոխազդեցությունները դիտարկել պատմականությունից դուրս՝ իբրեւ զուտ հավատքային երեւույթներ: Այդ դիրքերից անդրադառնալով «սրբացում» երեւույթի իմաստային վերլուծությանը՝ Վեհափառն այն որակում է որպես կրոնի համար էական նշանակություն ունեցող կատեգորիա: Նա ցույց է տալիս նաեւ, որ ինչպես անհատական, այնպես էլ՝ հասարակական մակարդակներում սրբացման գործընթացներն ուղղորդված են դեպի հավատքային հիմնարար նշանակություն ունեցող երեւույթներ, պատկերացումներ եւ գաղափարներ եւ սերտորեն կապված են դրանց հետ: Այդ հարցում Վեհափառի համոզմունքն այն է, որ «Այնտեղ, ուր Աստված չկա, այնտեղ, ուր Աստված չի կարող բնակվել, այնտեղ սկսվում է ստեղծագործական խաթարումը, ավերը, թալանը, մսխումը եւ կործանումը»[34]: Կրոնի ֆենոմենոլոգիական մեթոդի կիրառմամբ Վեհափառ Հայրապետը հետապնդում է մի այլ նպատակ եւս՝ հոգեւոր կյանքում արմատավորել այնպիսի իմաստային նշանակություն եւ վարքագծի այնպիսի նորմեր հաստատել, որոնցով կազմված «սրբության կամարը» կարդյունավորի ինչպես եկեղեցական հարաբերությունները, այնպես էլ այդ «կամարով անցնող» հասարակական եւ անհատական այլազան գործոնները:

34 **«Էջմիածին»**, 2007, ԺԱ, էջ 46: